

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՇԱԿ ԱՇՈՏԻ ՀԱԿՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱՆԱԶ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ  
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԸ.00.01-«Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության  
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2022

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

НАЦИОНАЛЬНЫЙ УНИВЕРСИТЕТ АРХИТЕКТУРЫ  
И СТРОИТЕЛЬСТВА АРМЕНИИ

АКОПЯН АРШАК АШОТОВИЧ

АРХИТЕКТУРНО-ПЛАНИРОВОЧНЫЕ ПРОБЛЕМЫ ОБЩЕСТВЕННЫХ  
ПРОСТРАНСТВ ЗЕЛЕННЫХ ЗОН ГОРОДА ЕРЕВАНА

А В Т О Р Е Ф Е Р А Т

диссертации на соискание ученой степени кандидата архитектуры  
по специальности 18.00.01- "Архитектура"

ЕРЕВАН 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Ճարտարապետության  
և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում

Գիտական ղեկավար՝

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Առաջատար կազմակերպություն՝


Պաշտպանությունը կայանալու է 2022թ. հունիսի 8-ին ժամը 14:00-ին  
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին կից  
գործող ՀՀ ԲՈԿ-ի 029 «Ճարտարապետություն» մասնագիտական խորհրդում:  
Հասցեն՝ 0009, ք.Երևան, Տերյան փ. 105:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՃՇՀԱՀ-ի գիտական գրադարանում:  
Հասցեն՝ 0079, ք. Երևան, Մառի փող.17/1:

Սեղմագրին կարելի է ծանոթանալ Ճարտարապետության և շինարարության  
Հայաստանի ազգային համալսարանի պաշտոնական կայքում՝ www.nuaca.am

Սեղմագիրն առաքված է 2022թ. ապրիլի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝  
ճարտարապետության դոկտոր, դոցենտ

 Լյուբա Վլադիմիրի Կիրակոսյան

Тема диссертации утверждена в Национальном университете архитектуры  
и строительства в Армении

Научный руководитель:

доктор архитектуры, профессор  
Гаспарян Мариетта Артасесовна

Официальные оппоненты:

доктор архитектуры, доцент  
Товмасын Саргис Аристакесович,  
кандидат архитектуры, профессор  
Арутюнян Эмма Папиновна.

Ведущая организация:

ЗАО "Ереванпроект".

Защита состоится 8-го июня 2022г. в 14:00 часов на заседании  
Специализированного совета 029-«Архитектура» ВАК РА, действующего при  
Национальном университете архитектуры и строительства Армении, по адресу: 0009,  
г.Ереван, ул. Теряна 105.

С диссертацией можно ознакомиться в научной библиотеке НУАСА по адресу: 0079,  
г.Ереван, ул. Марра, 17/1.

С авторефератом можно ознакомиться на официальном сайте НУАСА: www.nuaca.am.  
Автореферат разослан 26-го апреля 2022 г.

Ученый секретарь Специализированного совета:  
доктор архитектуры, доцент

 Киракосян Люба Владимировна

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը.** Յուրաքանչյուր քաղաքում կանաչ գոտիները, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները՝ այգիները, պուրակները և այլն կազմում են գործառական և գեղագիտական կարևոր հանգույցներ: Կանաչ գոտիների առկայությամբ են պայմանավորվում քաղաքային միջավայրի, հանգստի, հասարակական վայրերի կազմակերպման հարցերը և բնակլիմայական պայմանների բարելավման խնդիրները:

Կանաչ գոտիները Երևանի բնապատկերային և բնապահպանական քաղաքաշինական կարևոր հանգույցներից են, ունեն պատմամշակութային արժեք, որոնք ենթակա են պահպանման: Վերջին տասնամյակների ընթացքում, սակայն, այդ տարածքներում կատարվել են մի շարք անկանոն ճարտարապետահատակագծային փոփոխություններ, որոնց արդյունքում դրանց քաղաքաշինական զարգացման ներկայիս ուղղվածությունը չի համապատասխանում օգտագործման պայմաններին և բարելավման սկզբունքներին: Տեղի են ունենում արժեքավոր կանաչ տարածքների գանգվածային կառուցապատումներ և փոխակերպումներ:

2005թ. Երևանի գլխավոր հատակագծում սահմանված են քաղաքի կանաչ գոտիները և առանձին հատվածներում կենսաբազմազանության բնապահպանական հանգույցները, որոնք ներառված են վարչական շրջանների գոտիավորման նախագծերում՝ որպես կառուցվածքային հիմնական տարր: Սակայն թերի շահագործման, գործող նորմերի և օրենքների չպահպանման, ինչպես նաև պատմամշակութային միջավայրի խաթարման պայմաններում, այսօր կանաչ գոտիները դուրս են մնացել քաղաքի հատակագծային կապերի միասնական համակարգից և չեն համապատասխանում ընդհանուր օգտագործման և լանդշաֆտային տարածքների համալիր կազմակերպման ժամանակակից պահանջներին: Տվյալ հարցի շուրջ ներկայիս ստեղծված իրավիճակի բարելավման հրատապ պահանջի մասին են վկայում հանրային տարբեր քննարկումներն ու հասարակական մեծ հնչեղություն ստացած խնդիրները, որոնց համար իրականացվել են նախագծեր և ընդունվել են պաշտոնական որոշումներ:

1. «Կառավարության» Երևան քաղաքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը մշակելու մասին (2000թ.), Երևանի նոր գլխավոր հատակագծի միջոցառումների մասին (2004թ.), Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը (2005-2020թթ.) հաստատելու մասին (2006թ.), Երևան քաղաքի գլխավոր հատակագծի (2006-2020թթ.) իրականացման հիմնական միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին (2006թ.) և այլն,

2. Երևանի քաղաքապետի՝ Երևան քաղաքի զբոսայգիների և պուրակների սահմանափակումների մասին (2003թ.), Հրազդանի ձորի անտառ-պուրակի տարածքում կառուցապատման սահմանափակումների և չափորոշիչների մասին (2007թ.) և այլն,

3. Երևանի ավագանու՝ Երևանի զարգացման 2010-2013թթ. ծրագրերը (2009թ.) և այլն:

Երևան քաղաքում առաջին հասարակական կանաչ տարածությունների մասին տեղեկություններ կարելի է ստանալ պատմական արքյուրներից, իսկ ավելի ուշ շրջանի՝ XIX դ. դարի վերաբերյալ՝ նաև արխիվային փաստաթղթերից: Այդ մասին պատմական և ճարտարապետական վերլուծություններ կան Թ.Հակոբյանի, Մ.Գասպարյանի հրատարակած աշխատություններում, որոնք վերաբերում են հիմնականում XIX դ. երկրորդ կեսին՝ կապված 1856թ. գլխավոր հատակագծի հետ, համաձայն որի բացվեցին Անգլիական այգին (ներկայիս՝ Թատերական), Կոյուբայկինի և Նոր պուրակները (ներկայիս՝ Շահումյանի պուրակը և Սախարովի հրապարակը):

Խորհրդային ժամանակի լանդշաֆտային և ռեկրեացիոն տարածքների մասին հարցերը ներկայացված են Արծ.Գրիգորյանի և Մ.Թովմասյանի, Վ.Հարությունյանի, Մ.Հասրաթյանի և Ա.Մելիքյանի հրատարակած հետազոտություններում, որտեղ դիտարկված են Հայաստանի լանդշաֆտային գոտիներն իրենց առանձնահատկություններով, այդ թվում Երևանի՝ Հրազդանի ձորը, Կարապի լիճը, Օղակաձև պուրակը և այլ տարածքներ:

Կանաչ տարածքների ուսումնասիրության արդիականությունը հիմնավորված է այն հանգամանքով, որ դրանք դեռևս լիարժեք ինտեգրված չեն հանրային կյանքի քաղաքային պահանջներին և ներկայումս չեն համապատասխանում քաղաքի համաչափ զարգացման ընթացքին:

**Հետազոտման նպատակն** է Երևան քաղաքի կանաչ գոտիների և բնական տարածքների պատմաճարտարապետական առանձնահատկությունների ուսումնասիրությունը և արդի ճարտարապետահատակագծային համալիր կազմակերպման վերաբերյալ առաջարկությունների և առաջնահերթությունների փաթեթի մշակումը:

**Հետազոտության խնդիրներն են՝** Երևան քաղաքի կանաչ գոտիների

- պատմաճարտարապետական զարգացման և ձևատեղծման լուծումների առանձնահատկությունների ուսումնասիրություն. տեղեկատվական-անալիտիկ շտեմարանի ստեղծում՝ հիմնված քաղաքի տարբեր ժամանակաշրջանների քարտեզների, հատակագծերի, լուսանկարների և պատմական արքյուրների վրա.
- պատմամշակութային և բնական միջավայրի պահպանման ու փոխակերպումների ուղիների վերլուծություն՝ հիմնված հայրենական և արտասահմանյան փորձի վրա.
- հանգստի և հանրային տարածքների արդի ճարտարապետահատակագծային սկզբունքների կիրառման առանձնահատկությունների ուսումնասիրություն.
- կազմակերպման գործոնների և օրինաչափությունների բացահայտում:

**Հետազոտության մեթոդիկան** հիմնված է Երևանի քաղաքի կանաչ տարածքների համալիր ուսումնասիրության, հավաքագրած արխիվային և

ժամանակակից պաշտոնական փաստաթղթերի, նախագծերի, չափագրությունների, լուսանկարների և այլ նյութերի համեմատության, համակարգման և դասակարգման վրա:

**Հետազոտության առարկան է** Երևան քաղաքի կանաչ գոտիներում հասարակական տարածքների ճարտարապետահատակագծային, տարածական կազմակերպումը:

**Հետազոտության սահմաններն** ընդգրկում են Երևան քաղաքի կանաչ տարածքները և միջազգային փորձի ուսումնասիրությունը՝ XIX դարից սկսած մինչև ներկայիս ժամանակաշրջանը:

**Գիտական նորույթը:** Հիմնվելով առկա վիճակի ուսումնասիրության և միջազգային փորձի համեմատական վերլուծության վրա՝ առաջին անգամ կատարվել է համալիր համակարգված հետազոտություն Երևան քաղաքի կանաչ գոտիների և համանման լանդշաֆտային համալիրների ձևավորման օրինակափոխությունների ու առանձնահատկությունների վերաբերյալ: Կազմվել է Երևան քաղաքի կանաչ գոտիների տեղեկատվական-անալիտիկ շտեմարան:

**Պաշտպանության են ներկայացվում.**

- Երևան քաղաքի կանաչ գոտիների պատմաճարտարապետական զարգացումն ու փոխակերպումները, դասակարգումը և գնահատման մեթոդը, պահպանման ու հեռանկարային զարգացման ուղիները.
- գիտականորեն հիմնավորված առաջարկներ և հանձնարարականներ կանաչ գոտիների քաղաքաշինական ծրագրերի, հատակագծերի և իրավական դաշտի կարգավորման, կատարելագործման վերաբերյալ:

**Գործնական արժեքը և արդյունքների հնարավոր ներդրումը:** Երևանի կանաչ գոտիներում հասարակական տարածքների ճարտարապետահատակագծային արդի խնդիրների հետազոտման արդյունքները կարող են օգտագործվել քաղաքաշինական ծրագրերի իրականացման, նախագծերի կազմման ընթացքում:

Մինչև այժմ կանաչ գոտիների պատմաճարտարապետական զարգացման վերաբերյալ լիարժեք ուսումնասիրություն չկա: Առաջին անգամ կատարվող ուսումնասիրությունը կարող է ներառվել Երևանի քաղաքաշինության և ճարտարապետության պատմության և մասնագիտական ուսումնական դասընթացներում:

**Հրատարակումներ:** Ատենախոսության թեմայով հրատարակվել է 6 գիտական հոդված, որից երկուսը արտերկրում և դրանցից մեկը՝ համահեղինակությամբ:

Աշխատանքի առանձին դրույթներ ներկայացվել են «Քաղաքային շրջանների վերակառուցում և քաղաքային ցանցեր հետխորհրդային տարածքում» երիտասարդ հետազոտողների ու ասպիրանտների միջազգային ամառային դպրոցում (2014թ., ք.Դոնի Ռոստով) և «Քաղաքը ուշադրության կենտրոնում. քաղաքային կառավարման ուսումնասիրության մեթոդաբանական և իմացաբանական

մարտահրավերները» երիտասարդ հետազոտողների ու ասպիրանտների միջազգային գարնանային դպրոցում (2018թ., ք. Պերմ):

Ատենախոսությունը քննարկվել է ՃՇՀԱՀ «Ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության» ամբիոնի նիստերում:

**Աշխատանքի կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է տեքստային և գրաֆիկական մասերից: Տեքստային ծավալը կազմում է 140 էջ՝ ներածություն, երեք գլուխ, եզրակացություններ, 106 անուն օգտագործված գրականության ցանկ: Գրաֆիկական մասը ներառում է աղյուսակներ, գծագրեր, քարտեզներ, գրաֆիկներ, լուսանկարներ և սխեմաներ:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**Ներածության** մեջ հիմնավորվում է հետազոտական աշխատանքի արդիականությունը, ներկայացվում է նպատակը, դուրս են բերվում խնդիրները, տրվում է հետազոտման մեթոդիկան, գիտական նորույթը, գործնական նշանակությունը, հրատարակումները, ներկայացվում է ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

**Առաջին գլխում** ուսումնասիրվել է Երևանի քաղաքային միջավայրի հասարակական կանաչ տարածքների պատմաճարտարապետական զարգացման ընթացքն ու փոխակերպումները՝ ըստ համապատասխան ժամանակաշրջանների և քաղաքի զարգացման առանձին փուլերի (Նկ. 1): Երևան քաղաքում 1800-ականներից հասարակական նշանակության կանաչ տարածքները համեմատաբար փոքր մակերեսներով հիմնականում գտնվում էին եկեղեցիների (Զորավոր (Ս. Աստվածածին), Ս. Հովհաննես Մկրտչի, Կաթողիկե (Ս. Աստվածածին), Ս. Պողոս Պետրոս), մզկիթների (Հուսեին Ալի խանի, ներկայումս՝ Կապույտ մզկիթ, Զալ խանի) բակերում և քաղաքի մեծ հրապարակի շուրջը, իսկ բնակելի տների բակերի և սարդարի այգիները չունեին հասարակական նշանակության գործառույթներ:

Երևան քաղաքի 1856թ. հատակագծում կիրառվեց կանոնավոր հատակագծման սկզբունքը, որը նորույթ էր միջնադարում տարերայնորեն կառուցապատված հայկական բնակավայրերի քաղաքաշինական պրակտիկայում. անկանոն կառուցապատմանը փոխարինելու եկավ կանոնավոր փողոցային ցանցով հատակագծումը: Արդյունքում հասարակական կանաչ տարածքներն ստացան նույնպես կանոնավոր ուրվագծեր և կառուցվածք երևույթը ներմուծվեց քաղաքային միջավայր:

Զբոսայգիների կանոնավոր հատակագծման սկզբունքով, ճարտարապետական փոքր ձևերի կիրառմամբ Երևանի վարչաառևտրական կենտրոնին կից կառուցվեցին Անգլիական այգին, Կոյուբայկինի քաղաքային պուրակը, նոր հրապարակի կենտրոնում մերձակա պուրակը, որոնք ունեին հասարակական նշանակության գործառույթներ:

Խորհրդային Հայաստանում Երևան քաղաքի համար կազմվեց նոր գլխավոր հատակագիծը (1924թ. Ալ. Թամանյան), որով դրական փոփոխություններ առաջարկվեց քաղաքային միջավայրի կազմավորման կանաչ տարածքների տեղաբաշխման հետ կապված: Մասնավորապես ըստ նախագծի նախատեսվեց (մոտ 1,7%-ից ավելի քան 31%; 13,6 մ<sup>2</sup>/մարդ) կանաչ գոտիների մակերեսների կտրուկ աճ, որը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով (քաղաքի ընդարձակում, քաղաքաշինական հստակ գոտիավորում, աշխարհագրական պայմաններ, տվյալ ժամանակաշրջանի քաղաքաշինական տեսություններ և իր պրակտիկ փորձը): Նախագծվեցին քաղաքի միջավայրի բաղկացուցիչ մասերը՝ կանաչապատ լայն պողոտաներ, ընդարձակ զբոսայգիներ, պուրակներ (Օղակաձև զբոսայգին, Օպերայի և բալետի թատրոնին հարակից պուրակը, Գլխավոր պողոտան, Հրազդանի կիրճը, Հանգստի և մշակույթի զբոսայգին, Համալսարանական ավանի պուրակը, Մանկական զբոսայգին, Երևանյան և Վարդավառի լճերը), միևնույն ժամանակ պահպանվեցին և ընդարձակվեցին նախկին հասարակական կանաչ տարածքները (Անգլիական այգին, քաղաքային (Շահումյանի անվան) պուրակները): Վերը նշված կանաչ գոտիները, ըստ Ալ. Թամանյանի, հատակագծված էին որպես չընդհատվող լանդշաֆտառեկրեացիոն տարածքների համակարգ: Միասնական կանաչապատման համակարգի մեջ յուրաքանչյուր կանաչ գոտի կապված էր մյուս տարածքների հետ: Հասարակական տարածությունները նախագծվեցին կանաչ գոտիներով և ապահովում էին բնության տեսարանների ներկայությունը քաղաքում:

Սակայն, 1924թ. հատակագծի առանձին հանգույցներն ու նախագծային գաղափարները հետագայում չիրականացվեցին և որոշ նախագծված հատվածներ էլ փոխարինվեցին այլ հատակագծային լուծումներով: Դրա հետևանքով վնաս հասցվեց քաղաքաշինական ամբողջական ձևավորված հայեցակարգին, քաղաքի տարածական և նախագծային կառուցվածքին: Ալ.Թամանյանի և 1936-1937թթ. քաղաքի հատակագծերի կանաչ գոտիների մակերեսների համեմատությունից ստացվում է, որ օրինակ՝ Օղակաձև զբոսայգին կրճատվեց 37%, Գլխավոր պողոտան՝ 60%, Շահումյանի պուրակը՝ 30%, Անգլիական այգին՝ 39%, Օպերայի և բալետի թատրոնին հարակից պուրակը՝ 47%:

1940-1950-ականներին ծավալուն կանաչապատման աշխատանքների հետ միասին կանաչ գոտիներում ձևավորվում են ներքին հատակագծային կանոնավոր հորինվածքային լուծումներ՝ ծառուղիներ, ճեմուղիներ, արահետներ, հարթակներ, կառույցներ և հրապարակներ: Կիրառվում են այգեպուրակային կառուցման սկզբունքներ՝ Հաղթանակ, Մանկական զբոսայգի, Շահումյանի անվան պուրակ, Նոր Արաբկիր և այլ:

Մանկական երկաթուղու, աստղացուցարանի, աստղադիտարանի, բուսատեսակների, կենդանատեսակների ցուցադրական ու գիտական հավաքածուների համար հիմնվում են այգիներ, որոնք ռեկրեացիոն գործառույթներից բացի դառնում են նաև գիտական, ուսուցողական տարածքներ: Այդ տարածքների հիմնական գործառական նշանակությունը կապված էր

գիտության տարբեր ճյուղերի «հանրայնացման» գաղափարի ու դրա կոնկրետ դրսևորումների հետ: Հասարակական ընկալման մեջ դրանք արտահայտվում են՝ որպես այս կամ այն գիտության բնագավառին նվիրված տարածքներ: Ալ.Թամանյանի հատակագծով նախատեսվում էր նաև մշակույթի և հանգստի տիպի զբոսայգի (ներկայումս՝ Հաղթանակ), որոնք դիտվում էին ոչ միայն որպես կանաչ տարածք, այլև մշակութային միջոցառումների անցկացման վայր, որը բնորոշ էր ԽՍՀՄ շատ քաղաքներին:

XXդ. 50-90-ականներին ձևավորվեցին շուրջ 40-ից ավելի կանաչ տարածքներ, զբոսայգիներ (Թումանյանի անվան, Նոր Արաբկիր, Ծիծեռնակաբերդ և այլն) ու պուրակներ (Ալ.Թամանյանի, Մ. Սարյանի, Կոմիտասի անվան և այլն), որոնց թվում էին դեռևս առաջին գլխավոր հատակագծում նախատեսված կանաչ գոտիները: Սակայն վերջիններս արդեն իսկ չէին ձևավորում քաղաքային կանաչապատ տարածքների միասնական շղթա, ինչպես Ալ. Թամանյանի հատակագծում էր, և հաճախ արդեն ունեին մեկուսացված դիրք:

Երևան քաղաքի կանաչ գոտիների հատակագիծը, ներքին կառուցվածքը և ճարտարապետական լուծումները թույլ են տալիս դրանք հիմնականում բնութագրել որպես կանոնավոր հատակագծային լուծմամբ կանաչ գոտիներ՝ Հաղթանակի այգի, Շահումյան հրապարակին կից այգին, «Կարապի լիճ» և այլն: XXդ. 70-ականներին մշակվեցին հայեցակարգեր Հրազդան գետի հանգստի գոտու կիրճում ու Երևանյան արհեստական լճի համալիրի վերաբերյալ: Կիրճի՝ քաղաքի կենտրոնին հարող հատվածներում, պահպանելով բնապատկերային նախագծումը, ստեղծվեցին հանգստի գոտիներ:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ խորհրդային Երևան քաղաքի հիմնախնդիրներից էր միասնական կանաչապատ տարածքների շղթայի բացակայությունը, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների նորմայից ցածր (16 մ<sup>2</sup>/մարդ) մակերեսը, որոնք շարունակվեցին նաև հաջորդող ժամանակաշրջանում:

ԽՍՀՄ փուլումից հետո սոցիալ-տնտեսական պայմանների վատթարացման արդյունքում կանաչ տնկարկների ու տարածքների պահպանության միջոցների սակավության հետևանքով այդ տարածքները տրվեցին մասնավոր կազմակերպություններին, որոնք հաճախ փոխում էին կանաչ գոտիների գործառույթները՝ վերածվելով առևտրի և զվարճանքի կազմակերպման՝ մեծ մասամբ մասնավոր տարածքների: Սակայն առանձին օբյեկտների կամ տարրերի ներմուծումը այդ տարածքներ չնպաստեց դրանց հասարակական նշանակության օգտագործման մակարդակի բարձրացմանը, կանաչ գոտիների պահպանությանն ու խնամքին: Զբոսայգիներում և պուրակներում վարձակալված և մասնավոր տարածքները (օրինակ՝ Օպերայի թատրոնի հարակից պուրակների միայն 38% է ընդհանուր օգտագործման) խնամվում և բարեկարգվում էին տարածքային միասնական համակարգից դուրս՝ այգեպուրակային հորինվածքների անցանկալի և անթույլատրելի մոտեցումներով: Երևան քաղաքի կենտրոնի զբոսայգիների և պուրակների շուրջ 70-80%-ը ենթարկվել է փոփոխության՝ շարունակելով մնալ

որպես անբարեկարգ տարածքներ, իսկ շուրջ 30%-ը հիմնովին բարեկարգվել է (Նկ. 1): Բացի այդ Երևան քաղաքում Հրազդան գետի 80%-ը և Գետառի ափամերձ տարածքները տարբեր կառուցապատումների հետևանքով դարձել են հետիոտնի համար անհասանելի (Նկ. 2): Դրանց մի մասը վերածվել է նաև անօգտագործելի, շինարարության համար ոչ պիտանի, գետի վարարումներից ջրի տակ անցնող տարածքների:

Կանաչ տարածքներ սահմանող իրավական ակտերը, իրականացված նախագծերը և հասարակական պահանջմունքները այդ տարածքների նկատմամբ հաճախ գտնվում են տարբեր մակարդակներում: Երևան քաղաքի կանաչ գոտիները նախագծված են 2005թ. Երևան քաղաքի գլխավոր, 2007թ. թաղային համայնքների, 2010թ. միասնական կանաչ տարածքների համակարգի ձևավորման և առանձին կառուցապատողների հատակագծերում, որոնք հաստատված են քաղաքապետի համապատասխան որոշումներով: Սակայն այդ նախագծերը, իրավական փաստաթղթերը, ներկայիս իրավիճակը և իրականացվող քայլերը տարբեր ու հակասական են, քանի որ նախատեսված կանաչ գոտիները կառուցապատվում են. օրինակ՝ Օղակաձև զբոսայգում, Հրազդանի կիրճում, Դավմայի այգիներում և այլն: Կանաչ տնկարկների ու տարածքների պահպանության հետ կապված տեղի ունեցան մի շարք քաղաքացիական շարժումներ:

Երևան քաղաքի կենտրոն վարչական շրջանի ընդհանուր օգտագործման տարածքները խմբավորվում են, առանձին աղյուսակների միջոցով դիտարկվում են զբոսայգիների տեսակները և առանձնահատկությունները: Այն հնարավորություն է տալիս պարզելու զբոսայգիներում տարրերի, գործառական գոտիների և առանձնահատկությունների բացակայությունը կամ առկայությունը: Բացի այդ ցույց են տրվել XXդ. 90-ականներից մինչև 2000-ականները կառուցված շինությունները, որոնք նվազեցրել են կանաչապատ տարածքները և հասարակական նշանակության գործառույթները:

Ինչպես պատմաճարտարապետական զարգացումներն են ցույց տալիս կանաչ գոտիները եղել են քաղաքաշինական խոցելի հանգույցներ և տարբեր ժամանակաշրջաններում ենթարկվել փոխակերպումների, ճարտարապետահատակագծային և գործառական փոփոխությունների:

Այսպիսով, Երևանի հասարակական կանաչ տարածքների չլուծված հիմնախնդիրներն են մնացել համալիր ուսումնասիրությունների, հանրային վերահսկողության մեխանիզմների ու տեղեկատվության բացակայությունը, դրանց պահպանությունն ու նվազումը, հետիոտն և տրասպորտային կապը, ֆունկցիոնալ գոտիավորման և ճարտարապետական ձևավորման, ինչպես նաև կանաչ գոտիների վերաբերյալ նորմատիվային և իրավական փաստաթղթերի լրացումներն փոփոխությունները:

**Երկրորդ գլխում** ուսումնասիրվել է XIX-XXդդ. Արևմտյան Եվրոպայի քաղաքներում կանաչ տարածքների հանրայնացման գործընթացը՝

1. քաղաքային հասարակական կանաչ տարածքների առաջացումը,

2. դրանց կազմավորման ու գործառնության վրա ազդող գործոնները,

3. հնարավոր հասարակական տարածքների միասնական շրջանների ձևավորման օրինակները:

XIXդ. արդյունաբերական զարգացման հետևանքով եվրոպական մի շարք քաղաքներում (Փարիզ, Վիեննա, Համբուրգ, Լոնդոն) առաջացել էին քաղաքաշինական ու էկոլոգիական խնդիրներ: Կանաչ տարածքները կրճատվել էին կամ ընդհարապես բացակայում էին, և նման հանրային տարածությունների առկայությունը հաճախ աննպատակահարմար էր:

XIX-XXդդ. քաղաքաշինական խնդիրների հետևանքով առաջ եկան տեսություններ (քաղաք-այգի, ժամանակակից քաղաքի նախագիծ, Աթենքի խարտիա, տարածքների կայուն զարգացում, նոր ուրբանիզմ և այլն), որտեղ մի շարք պահանջների հետ մեկտեղ ընդգծվեց քաղաքներում հասարակական կանաչ տարածքների առկայության կարևորությունը: Դրանք հետագայում իրենց ազդեցությունն ունեցան քաղաքների զարգացման ուղենիշների վրա:

Եվրոպական քաղաքներում այդ տարածքների սակավության հետևանքով պալատական համալիրներին կից պահպանված կանաչ մակերեսները (Փարիզի Լյուքսեմբուրգյան այգիները (Luxembourg Gardens), Վիեննայի Շյոնբրունը (Schönbrunn Palace), Լոնդոնի Հեմփթոն Բորո (Hampton Court Palace), Թվիլենհեմ (Twickenham), Ստոու (Stowe Landscape Gardens), Հայդ պարկ (Hyde Park), Պոտոսդամի Սան Սուսի (Sans souci), Իսպանիայում Ալ-Համբրա (Alhambra)) փոխակերպվեցին և դարձան հանրային նշանակության կանաչ տարածքներ:

XX-XXIդդ. խիտ կառուցապատված խոշոր քաղաքներում տեղի է ունենում նաև տարածքների վերափոխումներ ու փոխակերպումներ կանաչ գոտիների (ք.Մոսկվա Զարյադե (Зарядье), ք.Ամստերդամ Վեստերգասֆաբրեկ (Cultuurpark Westergasfabriek), ք.Նյու Յորք «Հայ Լայն» (High Line), ավտոճանապարհներ՝ ք.Պորտլանդ Հարբոր Դրայվ (Harbor Drive), ք.Սան Ֆրանցիսկո Պիեր ավտոմայրուղում (Pier Freeway), ք.Միլոսկի Պարկ Արևելյան (Park East Freeway), ք.Սիեթլ Ալասկան և գետափյա տարածքներ՝ ք.Մոսկվա, ք.Նյու Յորք, ք.Չիկագո, ք.Լոս Անջելես, ք.Դետրոյիթ, ք. Աարուս, ք. Փարիզ, ք. Մադրիդ):

Այս համատեքստում բնական լանդշաֆտին վերադառնալը հնարավոր է ուղղորդիչ վեկտոր դառնալ Երևանի տարբեր հատվածներում նմանատիպ տարածքների վերականգման համար:

Արտասահմանյան փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գետափնյա կանաչ տարածքներին տրվում է ոչ միայն ռեկրեացիոն նշանակություն, այլև դրանց նպատակն է դառնում ստեղծելու փոխկապակցված հասարակական տարածքների ամբողջական համակարգ:

Արդի քաղաքաշինական տեսությունում լայնորեն շրջանառվում է հասարակական տարածություն հասկացությունը (public space): Այդ տարածքների ուսումնասիրությունների և հետազոտությունների վերաբերյալ կան բազմաթիվ աշխատություններ և գործում են մասնագիտական ինստիտուտներ (Ջ. Ջեկոբս, Վիլյամ Հ. Վայթ, Յ. Գեիլի, Ս. Լոու, Project for Public Spaces (PPS)-շահույթ

չհետապնդող նախագծային, դիզայնի և կրթական կազմակերպություն, Մեդիա, ճարտարապետության և դիզայնի «Стрелка» ինստիտուտ, [www.landezine.com](http://www.landezine.com)-լանդշաֆտային ճարտարապետության կայքը և այլն):

Գոյություն ունեցող հանրային տարածքների բարելավման ուղղությամբ միջոցառումները ուսումնասիրությունները կիրառվում են նախագծային աշխատանքներում (Նյու Յորք, Կոպենհագեն, Մեյբուրն) և նպաստում են, օրինակ, հասարակական տարածքների հետիոտն հասնելիության ակտիվացմանը: Տարածքների բարելավման ուղղությամբ իրականացված ժամանակակից մի շարք միջազգային ծրագրեր ցույց են տալիս, որ հանրային տարածքներն ու կանաչ գոտիները ավելի շատ են դառնում հետիոտնային:

Տարածքների համակարգման և գնահատման նպատակով կիրառվում են տարբեր եղանակներ, որոնք օգնում են հասկանալու, թե ինչպես հասարակական տարածությունը օգտագործել, բարելավել և դարձնել ավելի գործառական:

Երևանի այդ տարածքների գնահատման և վերլուծության համար ընտրվել են այնպիսի հատկանիշներ, որոնք կիրառելի են PPS-ի ստեղծած դիագրամում: Այն ներառում է չորս առանցքային հատկանիշներ՝ հասանելիություն ու կապեր, հարմարավետություն ու կերպար, կիրառելիություն ու գործառական տեսակներ, հաղորդակնություն: Հատկանիշները լինում են նաև ոչ նյութական հատկություններ և չափելի տվյալներ:

PPS-ին գնահատելով և վերլուծելով հազարավոր հանրային տարածքներ, ըստ այդ հատկանիշների, կազմել է Հյուսիսային Ամերիկայի մոտավորապես երեսուն լավագույն զբոսայգիների ու պուրակների ցանկը (Նյու Յորքի Կենտրոնական զբոսայգին (Central Park), Նյու Օրլեանի Ջեյքսոն Սքուերը (Jackson Square), Բոստոնի հանրային պուրակը (Boston Public Garden)) ու Եվրոպայի (Փարիզի Լյուքսեմբուրգյան, Տույլերիների այգիները (Jardin des Tuileries), Բարսելոնայի Գուելի պարկը (Parc Guell), Լոնդոնի Սբ Ջեյմս զբոսայգին (Saint James Park)):

Մարդկանց, այլ ոչ թե մեքենաների և առևտրի կենտրոնների համար, քաղաքներ նախագծելու գաղափարների հիման վրա (Ջ. Ջեյքոբս, Վիլյամ Հ. Վայթ) ձևավորվել է «Տարածքի պատրաստում» (Placemaking) հայեցակարգը, որն իր զարգացումն ունեցավ PPS-ում: Այն օգնում է համայնքներին միասնական տեսլականի մեջ ինտեգրել տարբեր կարծիքներ, ձևավորել և իրականացնել համապատասխան ծրագիր:

Երևան քաղաքի վերաբերյալ բացակայում է այդ տարածքների և հանրային կյանքի փոխազդեցության հետ կապված հիմնախնդիրների դուրսբերումն ու գնահատումը, որը կօգնի բացահայտելու ձևավորման օրինաչափությունների առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում (PPS) հատկանիշները ներմուծելու համապատասխան միջավայր:

Յ.Գեիլի հասարակական տարածքների վերաբերյալ բազմաթիվ հետազոտություններում հանրային տարածության և հանրային կյանքի փոխազդեցությունը համակարգվում և գրանցվում է համապատասխան գործիքակազմերով (հաշվելով (counting), քարտեզագրելով (mapping), տեղանքի

հատկազոտումով (tracing), հետիոտնի շարժընթացով (tracking), հետքերի դիտարկումով (looking for traces), լուսանկարելով (photographing), օրագիր լրացնելով (keeping diary), թեստային քայլքով (test walks)): Վերջիններիս միջոցով ձեռք է բերվում հասարակական տարածքի վերաբերյալ օգտակար տեղեկություններ, որոնք օգնում են առավել հիմնավոր բարեկարգել տարածքը:

Միջոցառումները մոտեցումները, հանրային կյանքի ու տարածքի փոխազդեցությունները, տարածքի վերլուծության գործիքակազմը (Յ. Գեիլի), (PPS-ի) տարածքի գնահատման և հասարակական տարածքի ուսումնասիրությունների մեթոդները (Strelka ինստիտուտ) նպատակահարմար է տեղայնացնել հայրենական նախագծային պրակտիկայում՝ մինչև նախագծային փուլ: Դրանց օգտագործմամբ հնարավոր է թեստավորել Երևանի կանաչ տարածքները, և արդյունքները կիրառել հեռանկարային զարգացման համապատասխան ուղղությունների մշակման համար:

Ժամանակակից միտումները պարզելու նպատակով ուսումնասիրվել է վերջին տարիների ընթացքում կառուցված մի շարք կանաչ գոտիների արտերկրյա փորձը: Դիտարկված օրինակների նախագծերում ընդգծվում են դրանց գործառայնությունը, կառուցվածքը, լանդշաֆտը, բուսականությունը, հետիոտն և տրասպորտային կապը, տեխնիկական հնարավորությունները, տեղեկատվական տեխնոլոգիաները, ինչպես նաև այդ տարածքների վերաբերյալ հանրային քննարկումները:

- Գործառայնության և կառուցվածքի մեջ քննարկվում են այն սահմանափակումները՝ կառույցների բարձրությունը ու չափերը, գործառայնությունը, այցելուների շրջանակն ու քանակը, ավտոկայանտեղի, որոնք անհրաժեշտ են այդ տարածքների համար:
- Լանդշաֆտը և բուսականությունը նույնպես ձևավորում են տարածքի ճարտարապետությունը՝ ընդգծելով հորինվածքային հանգույցները, տարածքի առանձնահատկությունները՝ դառնալով հայեցակարգի գլխավոր դոմինատը:
- Հետիոտն և տրասպորտային կապերի կազմակերպումը հասարակական տարածությունում հնարավորություն է տալիս շարժման ուղղությունների տարանջատման համար և առավելություն է տրվում հետիոտն ու հեծանվային ուղիների ձևավորմանը:
- Տեխնիկական հնարավորությունների նպատակն է ապահովել կայուն, էներգաարդյունավետ, ինժեներական ենթակառուցվածքներով լիովին ինտեգրված տարածք՝ օգտագործելով երկարակյաց նյութեր: Տեխնիկական լուծումները ստեղծում են բոլորովին այլ պայմաններ այդ տարածքների համար:
- Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը ուշադրության առանձին խնդիր է կանաչ գոտիներում հասարակական տարածքների միջավայրի ձևավորման և նախագծման համար, քանի որ մարդիկ ավելի շատ են օգտագործում տարբեր տեխնիկական ու հաղորդակցման միջոցներ (համակարգիչներ, հեռախոսներ, համացանց և այլն) և դրանց նկատմամբ պահանջը նույնպես փոփոխվում է: Տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս առցանց հետևել, կառավարել,

վերահսկել կանաչ գոտում տեղի ունեցող ցանկացած իրադարձություն, միջոցառումներ ու նաև դրանց փոփոխությունները:

- Նախագծման ընթացքում հանրային քննարկումներն օգնում են շահագրգիռ կողմերի, պատասխանատուների և ներդրողների հետ կազմել միասնական նախագծման առաջադրանք: Այն նաև փոխհամաձայնեցված ծրագիր է դառնում, որը պետք է բավարարի այդ տարածքներից օգտվողների կարիքներն ու պահանջմունքները:

**Երրորդ գլխում** քննարկվում են վերջին տասնամյակում տարբեր քաղաքների հասարակական տարածքներում իրականացրած համապատասխան ծրագրերի ու նախագծերի մի շարք դրույթներ, խնդիրների ու հարցերի պարզաբանման օրինակներ, որոնք հնարավոր է կիրառել հայրենական պրակտիկայում, ինչպես նաև Երևան քաղաքի կանաչ գոտիների հեռանկարային զարգացման ուղղությունների մշակման, նախագծման և բարեկարգման աշխատանքներում:

Միջազգային փորձի վերլուծությունը կարող է հիմք հանդիսանալ ՀՀ նորմատիվային և իրավական փաստաթղթերում փոփոխություններ կատարելու համար, ինչպես նաև ունենալ գործնական կիրառելիություն: ՀՀ իրավական փաստաթղթերը պետք է ոչ միայն ապահովեն նորմատիվային պահանջները, այլև ընդգծեն դրանց հասարակական գործառույթը:

Հասարակական կանաչ տարածքը բնութագրելու համար արձարծվում է համապատասխան ձևակերպում, որի միջոցով հնարավոր է համեմատել տարածքները և պարզաբանել առկա խնդիրները: Ըստ այդմ՝

Կանաչ գոտիների ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում հասարակական են այն տարածքները, որոնք իրենց հանրային նշանակությամբ օգտագործվում են կամ նախատեսված են ամբողջովին օգտագործման: Հանրային կյանքը (հանգիստ, զբոսանք, հանդիպումներ և այլն) հասարակական տարածքում իրականանում է լիարժեք, քանի որ հաշվի են առնված տարածքի բոլոր առանձնահատկությունները, գործառույթները և միջավայրի հարմարավետության չափանիշները:

Կարևոր պահանջ է նաև նախագծային փաստաթղթերի ընդունման ընթացակարգերում (Նկ. 3) ներմուծել հայրենական նախագծային պրակտիկա տարածքների բազմակողմանի միջդիսցիպլինար ուսումնասիրությունները մինչև նախագծման փուլերը, որը պետք է դարձնել կարևոր պայման, և նախագիծը ընդունել համապատասխան ուսումնասիրությունների և հիմնավորումների առկայության դեպքում: Ըստ այդմ առավել հիմնավոր է դառնում տարածքների ճարտարապետական լուծումները, բարեկարգումը և հարմարավետ միջավայրի ապահովումը: Ներկայումս այդ տարածքների ձևավորման, պահպանման և փոխակերպումներից խուսափելու համար առաջարկվում են մի շարք արդի դրույթների կիրառում, որոնք բացակայում են հայրենական պրակտիկայում:

Դրանց թվում՝

- ✓ ձևավորել տարածքին բնորոշ հայեցակարգ,
- ✓ ստեղծել կայուն և էներգասարդյունավետ միջավայր,

- ✓ կարևորել հետիոտն և հեծանվային ուղիների առկայությունը,
- ✓ օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրեր, կառավարում և այլն:

Արտասահմանյան փորձի վերլուծությունը հիմք ընդունելով՝ դիտարկվել են Երևան քաղաքի կենտրոնի զբոսայգիների և պուրակների գործառական գոտիավորումը, առանձին տարրեր և միջավայրի ընկալման ձևերը (հետիոտն և տրասպորտային կապի, ճարտարապետության տարրերի ձևավորում և կահավորում):

Հարմարավետության մակարդակի բարձրացման նպատակով հետիոտն և տրասպորտային կապերը պետք լինեն առավելագույնս հարմար: Երևան քաղաքում դրանց ընդլայնումը կամ բարելավումը հնարավոր է իրականացնել քաղաքի կենտրոնում, քանի որ այդ տարածքների 35%-ում դրանք պահպանվել են ամբողջությամբ կամ մասամբ: Ըստ այս հետազոտության Հրազդանի կիրճ, Մանկական երկաթուղի, Ծիծեռնակաբերդի զբոսայգի, Գլխավոր պողոտայի (Սարյան փ.–Մաշտոց պ. և Նալբանդյան–Հանրապետություն–Խանջյան հատվածը), Օղակաձև զբոսայգու (Վ.Մամիկոնյանի արձան), Շահումյանի պուրակի, Վ.Համբարձումյան պուրակի (ուսանողական), ՃՇՀԱՀ-ի պուրակի, Սիրահարների այգու, ԱԺ-ի դիմացի պուրակի հատվածները:

Հրազդան գետի ափերը հետիոտնին առավել մոտեցնելու և այդ տարածքները օգտագործելու նպատակով, որպեսզի հնարավոր լինի շարժվել գետի ափին ոչ միայն ավտոմեքենայով, այլև հեծանվով կամ հետիոտն ուղիներով, առաջարկվում է ձևավորել միասնական և հասանելի հասարակական տարածքների շղթա՝ գետն ու գետամերձ գոտին դարձնելով քաղաքային ռեկրեացիոն և կոմունիկացոն «ողնաշար» (Նկ. 2): Հրազդան գետի հետիոտն թափանցելիությունից բացի անհրաժեշտ է ձևավորել կապեր նաև հարակից տարածքների հետ՝ Թումանյանի անվան այգի, Ծիծեռնակաբերդ, Մանկական երկաթուղի և այլն:

Զբոսայգիների գործառական գոտիներ են՝ մանկական, սպորտային, զանգվածային միջոցառումների, հանգստի, հասարակական սննդի, տնտեսական և այլն: Երևան քաղաքի կենտրոն վարչական շրջանի այդ տարածքների գործառական գոտիավորման խնդիրը առկա է 64%-ում (Անգլիական այգի, Օպերային հարակից պուրակներ, Օղակաձև զբոսայգի, Հրազդանի կիրճ անտառ-պուրակ): Այդ տարածքների 20% (Մանկական երկաթուղի, Գլխավոր պողոտա (Սարյան–Մաշտոց), Հրազդանի կիրճ) հնարավոր է բարելավել, 8%-ը՝ (Օղակաձև զբոսայգի (Վարդանանց–Տիգրան Մեծ) մասնակի, իսկ մնացած 36%-ը պահանջում է ամբողջական ընդհանուր փոփոխություններ:

Գործառական գոտիների համապատասխան՝ անհրաժեշտ է իրականացնել ճարտարապետական տարրերով ձևավորում և կահավորում: Այն պետք է ապահովի բնապահպանական, գեղագիտական և հարմարավետ միջավայր: Երևան քաղաքի կենտրոն վարչական շրջանի կանաչ գոտիների 77%-ն ունի ճարտարապետական տարրերով ձևավորելու և կահավորելու խնդիր, որից 30%-ը հնարավոր է բարելավել (Մանկական այգին, Ծիծեռնակաբերդի զբոսայգին,

Հրազդանի կիրճ-անտառը), սակայն 47%-ն ունի ընդհանուր քաղաքաշինական վերափոխման անհրաժեշտություն:

Քննարկվում է հասարակական կանաչ տարածքների հետիոտն ակտիվության, բնակչության տարբեր խմբերի սպասարկման և հարմարավետության բարելավման համար կանաչ գոտիների սպասարկման տարածությունները՝ հիմք ընդունելով սպասարկման շառավիղները: Սպասարկման սահմանների ուսումնասիրությունը կատարվել է 2005թ. գլխավոր հատակագծի հենակետային և google.com/maps-ի տվյալների համաձայն: Ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների սպասարկման սահմաններն ընտրվել են առավելագույնը 500մ շառավիղով (Նկ. 4)՝ հաշվի առնելով, որ այդ տարածքը ներառում է երեխաների խաղահրապարակներ, մեծահասակների, բնակչության հանգստի գոտիներ և մարզահրապարակներ, տարբեր տարիքային խմբերին հասանելի միջավայր (ՀՀՇՆ 30-01-2014):


Առաջարկվում է Երևան քաղաքի համար համապատասխան ուրվագիծ և դրա հիման վրա առանձին նախագծեր կազմելու անհրաժեշտություն: Ինչպես ցույց է տալիս հատակագիծը, որոշ վարչական շրջանների կանաչ գոտիներ մեկուսացված են և դրանց սպասարկման տարածությունը կապված չէ մոտակայքի նմանատիպ կանաչ գոտիների սպասարկման տարածության հետ: Նման մեկուսացված տարածքները բնակելի թաղամասերի համար քիչ են և ունեն ընդլայնման խիստ կարիք: Սովորաբար հասարակական սպասարկումը ինքնաբերաբար աճում է այն տարածքներում, որոնք ամենամոտն են հետիոտն ուղիներին:

Խնդիրների համակարգումը պահանջում է կանաչ տարածքների էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի (համացանցային կայք) ստեղծման անհրաժեշտությունը, քանի որ այն տարածքի փոփոխությունների համար կձևավորի բաց քննարկումների հարթակ, կբարելավի հանրային և վարչական վերահսկողության մեխանիզմները և կդառնա կանաչ տարածքների վերաբերյալ տեղեկատվական բազա:

Հարմարավետության սահմանման և ներդրման հնարավորություններից մեկը կանաչ գոտու մոդելի ձևավորումն է, որի համար առաջարկվում է բազմաֆունկցիոնալ զբոսայգի (20-50 հա): Այն ներառում է բնակչության տարբեր խմբերի համար ռեկրեացիոն գոտիների բազմազանություն: Բազաֆունկցիոնալ զբոսայգու ընդհանուր մակերեսն ունի հետևյալ ֆունկցիոնալ գոտիները՝ զանգվածային միջոցառումների (շոուներ, զվարճանք, ատրակցիոններ և այլն)՝ 20-25%, ֆիզիկական առողջարանական՝ 25-35%, մանկական՝ 10-15%, հանգստի և զբոսանքի՝ 25-35%, տնտեսական 2-4%: Առաջարկվող գործառական գոտիների տեղադրության ժամանակ պետք է հաշվի առնել բնական լանդշաֆտային և հատակագծային պայմանները:



Դիտարկվում են զբոսայգու առանձին գործառական գոտիների (ավտոկայանատեղի, մուտքային, մանկական, սպորտային, զանգվածային միջոցառումների, պասիվ հանգստի, հասարակական սննդի, տնտեսական, շների զբոսանքի) նախագծման առանձնահատկությունները: Զանգվածային միջոցառումների գոտին սովորաբար պետք է տեղադրել զբոսայգու հիմնական

մուտքի մոտ՝ մինչև 150մ հեռավորության վրա, որպեսզի կրճատվի այցելուների հոսքը զբոսայգու այլ գոտիներ:



Նկ. 1. 1906-2005թթ. Երևան քաղաքի կանաչ գոտիների հատակագծերի համեմատություն

Նկ. 2. Երևան քաղաքի և Հրազդան կիրճի իրավիճակային և առաջարկվող կապեր



Նկ. 3. Նախագծերի հաստատման ընթացակարգի առաջարկ

Նկ. 4. Երևան քաղաքի կանաչ գոտիների ազդեցության սահմաններ

Սպորտային առողջարանական գոտին տեղադրվում է բաց հատվածում՝ համեմատաբար հարթ ռելիեֆի վրա ջրավազանի մոտակայքում: Սպորտային



հատվածը դասավորվում է զբոսայգու մուտքի մոտ, որն ապահովում է հարմարավետ ծանրաբեռնվածություն և նվազագույն տարանցումը զբոսայգու այլ գոտիներով:

Մանկական հանգստի գոտին ներառում է տարբեր տարիքային խմբերի հրապարակներ, որոնք ցանկալի է տեղադրել բնակելի կառուցապատման, մանկական հաստատությունների զբոսայգու մուտքի մոտ:

Հանգստի և զբոսանքի գոտիները ներառում են կանաչ տնկարկներ, հանգստի համար թեթև կանգառներ (զրուցարաններ, ծածկեր): Սովորաբար տեղադրում են զբոսայգու ծայրամասային հատվածում՝ աղմկոտ կառույցներից հեռու: Այս գոտու համար կարևոր է ձևավորել բնապատկերային լանդշաֆտներ զբոսանքի ճեմուղու երկայնքով՝ ստեղծելով տեսարանային հրապարակներ:

Կանաչ գոտիների միասնական համակարգի ձևավորման համար առաջարկվում են Երևան քաղաքի Հրազդան գետի ափամերձ կանաչ տարածքները: Գետը բաժանում է քաղաքը երկու հատվածի և դիտարկվում է որպես «կանաչ կենտրոն»: Գետամերձ որոշ հատվածներ անհրաժեշտ է դարձնել բնակչության համար հասանելի, ձևավորել հարակից տարածքների հետ նոր կապեր՝ փոփոխվող, թեմատիկ, բնապահպանական, ռեկրեացիոն գոտիներ, դիտակետեր, մատչելի հետիոտն ու հեծանվային երթուղիներ: Կարևոր հանգամանք է պահպանել և վերականգնել պատմամշակութային կառույցները՝ միաժամանակ ներառելով հանգստի տարբեր ձևերի բազմազանությունը:

Հրազդան գետի և Գետառի ափամերձ և հարակից տարածքների հետ միասնական հայեցակարգի և նախագծերի ձևավորումից հետո, դրանց իրականացման դեպքում կպահանջվեն մեծ ֆինանսական ներդրումներ, սակայն հնարավոր կլինի իրականացնել փուլային տարբերակով:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Մինչև XIX դ. Երևան քաղաքն ուներ անկանոն կառուցապատում և հիմնականում մասնավոր կանաչ տարածքներ, իսկ 1856թ. Երևան քաղաքի հատակագծում ներմուծվում են կանոնավոր հատակագիծ և հասարակական կանաչ տարածքներ: 1924թ. գլխավոր հատակագծում առաջին անգամ գոտիավորվում են կանաչ տարածքները, տեղի է ունենում դրանց քանակական ու որակական աճ: Հետթամանյանական ու հետխորհրդային շրջանում տարբեր գործոնների ազդեցությամբ տեղի են ունենում Երևանի կանաչ տարածքների մակերեսների, առանձին հանգույցների, նախագծային գաղափարների փոփոխություններ և փոխակերպումներ (կանաչ տարածքների ավելի քան 40%):
2. Ուսումնասիրվել է միջազգային փորձը և առաջարկվել է Երևանի կանաչ տարածքների պահպանման տեղեկատվական համակարգի կառուցվածք և ցանկ՝ ըստ ժամանակագրության և ճարտարապետահատակագծային առանձնահատկությունների, որը կարող է հիմք դառնալ դրանց

գնահատման, առաջնային կարգավորումների, չափանիշների ճշգրտման, կարգավիճակների սահմանման, փոփոխման և վերահսկման համար:

3. Առաջարկվել է նախագծման փուլերից առաջ իրականացնել միջդիսցիպլինար հետազոտություններ Երևան քաղաքի հանրային կյանքի և տարածքների փոխազդեցության վերաբերյալ՝ ստեղծելով հիմնավոր ճարտարապետական լուծումների հնարավորություն:
4. Իրավական փաստաթղթերի և արտերկրյա փորձի վերլուծության հիման վրա առաջարկվել է լրացնել քաղաքաշինական նորմատիվային պահանջները և ներմուծել հասարակական կանաչ տարածքների վերաբերյալ դրույթ: Մշակվել է Երևան քաղաքի կանաչ գոտիների ազդեցության սահմանների հատակագիծը, որը ցույց է տալիս հարակից գոտիների հասանելիությունը, հասարակական կանաչ տարածքների մեկուսացվածությունը: Հասարակական սպասարկման մակարդակը կանաչ գոտիներում բարձրացնելու համար առաջարկվել են այդ տարածքներում սահմանել պարտադիր գործառական և տարածքային բաղադրիչներ՝ հաշվի առնելով հարակից կառուցապատված գոտիները:

### ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Հակոբյան Ա.Ա.** Երևան քաղաքի հասարակական կանաչ տարածքների սպասարկման տարածությունների հետիոտն հասանելիության խնդիրները // ՃՀԱՀ-ի գիտական աշխատություններ. - Երևան, 2019, - Հ. IV(75). - էջ 51-60:
2. **Мамян З.Г., Акопян А.А.** Роль зеленых зон в пространственном формировании городской структуры Еревана //Budownictwo 23. - Ченстохова, 2017. - 199-204 с.
3. **Акопян А.А.** Архитектурно-планировочные проблемы по пешеходной доступности зеленых зон города Еревана //Современное строительство и архитектура: Энергосберегающие технологии: Сборник материалов 8 Республиканской научно-практической конференции (с международным участием). – Бендеры, 2017. - 65-68 с.
4. **Հակոբյան Ա.Ա.** Երևանի հասարակական կանաչ տարածքների պատմական զարգացումը // ՃՀԱՀ տեղեկագիր. - Երևան, 2015. - Հ.4(48). - էջ. 22-27:
5. **Հակոբյան Ա.Ա.** Քաղաքներում կանաչ տարածքների հանրայնացման շուրջ //ՃՀԱՀ տեղեկագիր. - Երևան, 2015. - Հ.5(48). - էջ. 37-41:
6. **Հակոբյան Ա.Ա.** Երևանի Գլխավոր պողոտայի հանրային տարածքների սոցիալական փոխակերպումների շուրջ //Հայաստանի շինարարների միության գիտական աշխատությունների ժողովածու. - Երևան, ՃՀԱՀ, 2014. - Հ.274 . - էջ 23-29:

**АРШАК АШОТОВИЧ АКОПЯН**  
**АРХИТЕКТУРНО-ПЛАНИРОВОЧНЫЕ ПРОБЛЕМЫ ОБЩЕСТВЕННЫХ**  
**ПРОСТРАНСТВ ЗЕЛЕННЫХ ЗОН ГОРОДА ЕРЕВАНА**  
**РЕЗЮМЕ**

В постсоветский период зеленые зоны Еревана, перенесли серьезные видоизменения из-за управленческих, социально-экономических факторов, а также нецелесообразных градостроительных и архитектурно-планировочных решений обусловленных сложностями переходного периода. В результате, из-за спонтанного, а в некоторых случаях unplanned строительства, значительная часть зеленых территорий полностью или частично утратила свое общественно-функциональное значение. Отсутствие комплексного подхода относительно этих территорий и их функционального значения привело к возникновению ряда градостроительных и архитектурно-планировочных проблем. Исходя из задач эффективного планирования процесса развития, а также процессуального многостороннего регулирования дальнейшей планировки города Еревана, очевидна необходимость усовершенствовать имеющиеся механизмы и разработать четкие, эффективные градостроительные и архитектурно-планировочные подходы для сохранения и развития зеленых общественных территорий.

Исследование архитектурно-планировочных решений историко-архитектурного развития и формообразования показывает, что процесс создания и развития зеленых зон города Еревана связан с особенностями исторического развития города в персидском, российском, советском и постсоветском периодах. В персидский период зеленые общественные пространства в Ереване были ограничены во дворах церквей и мечетей, в XIX веке, а уже в российский период в Ереване впервые появляются зеленые общественные пространства регулярного типа с архитектурно задуманной планировочной основой.

В советский период, согласно генеральному плану, спроектированному Александром Таманяном (1924 г.), зеленые зоны должны были составить 31%; т. е. 13,6м<sup>2</sup>/человек, что ранее составляло 1,7%. Однако в разное время советского периода предусмотренные Ал. Таманяном зеленые общественные пространства города Еревана были подвергнуты перепланированию за счет сокращений этих территорий. В постсоветский период около 70-80% парков и скверов в центре города Еревана были подвергнуты изменениям продолжая оставаться как неблагоустроенные территории, и только около 30% из них основательно обустроилось.

Из-за сокращений и видоизменений этих территорий возникают задачи, связанные с их функциональным значением и доступностью. Нецелевое использование и застройки общественных пространств зеленых зон значительно сократили площади их территорий. В результате этого, последние также подверглись функциональным формоискажениям, ведя к сокращению своего общественного значения или ликвидации, превращаясь в зеленые островки или в территории обслуживания и т.п.

Из-за нецелевого использования и функциональных видоизменений возникают задачи, связанные с доступностью пешеходной и транспортной связи, свободного передвижения, так как в результате застроек и видоизменений зеленые зоны становятся труднодоступными и изолированными.

Сравнительное исследование отечественного и международного опыта путей сохранения и оптимизации историко-культурных и природной среды зеленых общественных пространств показывает, что для решения и урегулирования этих задач необходимо в Ереване осуществить широкомасштабные программы переустройства заданных территорий.

Как показывают теория и международный опыт, в XIX-XXI веках в густонастроенных европейских городах, из-за нехватки зеленых зон ряд территорий с различными функциональными значениями трансформировались в зеленые зоны. Осуществление подобных проектов в Ереване, в итоге позволит приблизить город к нормативным требованиям относительно вопросе зеленых территорий. Это даст возможность формировать в Ереване целостную систему взаимосвязанных общественных пространств развивая пешеходные и велосипедные маршруты.

Решения задач современной архитектурно-планировочной организации зеленых зон города Еревана должны быть основаны на концептуальном подходе, в рамках которого рассмотрены соответствующие предложения и приоритеты.

Концептуально, для урегулирования и решения вышеназванных задач, считается необходимым осуществить также нормативные и законодательные изменения, которые должны быть основаны на многосторонних измерениях и оценке глубинных анализов общественной жизни и взаимодействий территорий.

Выявление проблем, связанных с факторами организации зеленых территорий, критерий и закономерностей показывает, что следует внедрить в отечественную практику применение разных методов является проведение детального предпроектного исследования с целью исследования, оценки и тестирования. Это даст возможность получить универсальные данные, которые могут быть использованы для формирования и сохранения зеленых общественных пространств. Обязательным требованием. В процессе формирования зеленых территорий, социальная вовлеченность и общественная ответственность также рассматриваются как важное условие.

**ARSHAK HAKOBYAN**  
**ARCHITECTURAL AND URBAN PLANNING PROBLEMS OF PUBLIC SPACE OF**  
**GREEN ZONES IN THE CITY OF YEREVAN**  
**SUMMARY**

In the post-Soviet period, the green areas in the city of Yerevan suffered serious changes due to administrative, social-economic factors as well as various architectural and urban planning approaches due to the difficulties of the transition period. As a result, due to spontaneous, and in some cases unplanned construction, a significant part of the green areas completely or partially lost its social functional meaning. The lack of an integrated approach to these territories and their functional significance has led to a number of urban planning and architectural problems. Based on the problems of effective planning of the development process, as well as the procedural multilateral regulation of the further planning of the city of Yerevan, it is obvious that it is necessary to improve the existing mechanisms and develop clear, effective urban planning and architectural approaches for the conservation and development of green public spaces.

The study of architectural and planning decisions of historical and architectural development and shaping shows that the process of creating and developing green zones in the city of Yerevan is associated with the features of the historical development of the city in the Persian, Russian, Soviet and post-Soviet periods. In the Persian period, green public spaces in Yerevan were restricted in the courtyards of churches and mosques, and already in the Russian period, green public spaces of a regular type with an architecturally planned basis first appeared in Yerevan. In the Soviet period, according to the master plan designed by Alexander Tamanyan (1924), the green areas were supposed to be 31%; i.e. 13.6 m<sup>2</sup> / a person, which was previously 1.7%. However, at different times of the Soviet period provided by Al. Tamanyan's green public spaces in the city of Yerevan were re-planned due to the reductions in these territories. In the post-Soviet period, about 70-80% of parks and squares in the center of Yerevan were subjected to changes, continuing to remain as undeveloped territories, and only about 30% of them were thoroughly settled.

Due to the reductions and modifications of these territories, tasks related to their functional significance and accessibility arise. Inappropriate use and development of zones of public space of green zones have significantly reduced the area of landscaping of green areas. As a result of this, these territories also underwent functional distortions, leading to a reduction in their social significance or liquidation, turning into green islands or service areas, etc.

Due to inappropriate use and functional modifications, tasks arise related to the availability of pedestrian and transport communications, free movement, since as a result of buildings and modifications, green areas become isolated and difficult to access. A comparative study of domestic and international experience in preserving and modifying the historical, cultural and natural environments of green public spaces shows that in order to solve and resolve these problems it is necessary to implement large-scale programs for the reconstruction of given areas in Yerevan.

As the theory and international experience show, in the 19-21 centuries in densely configured European cities, due to the lack of green zones, a number of territories with different functional values were transformed into green zones. The implementation of such projects in Yerevan will eventually bring the city closer to the regulatory requirements regarding the issue of green areas. This will make it possible to form an integrated system of interconnected public spaces in Yerevan by developing walking and cycling routes. Solving the problems of the modern architectural and planning organization of the green zones of the city of Yerevan should be based on a conceptual approach, within which relevant proposals and priorities should be considered.

Conceptually, to resolve and solve the above mentioned problems, it is also considered necessary to implement regulatory and legislative changes, which should be based on multilateral measurements and an assessment of in-depth analyzes of public life and the interactions of territories.

The identification of problems associated with the factors of the organization of green areas, criteria and patterns show that the application of different methods and properties should be introduced into domestic practice for the purpose of research, evaluation and testing. This will provide an opportunity to obtain universal data that can be used to form and preserve green public spaces. As a mandatory requirement, it is also necessary to introduce analyzes related to the problems of green areas before the design stage. In the process of forming green areas, social inclusion and social responsibility are also considered as an important condition.

